<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2019/16-25-ԵՊԲՀ»

ք. Երևան << >> << >> 2019 թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Դավ Պրոդուկտ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Սարգիս Գյուրջյանի, որը գործում է «Դավ Պրոդուկտ» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տաս)** օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տաս)** օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3959000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն ինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ***20*** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«Դավ Պրոդուկտ»ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ք.Երևան Էրեբունի փող. 23/1
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ Կամար մ/ճ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 157003168230100
հ/հ 11500166513800	Էլ.հասցե՝ productdav@gmail.com
ՀՎՀՀ 01503448	Հեռ. 055 87 87 30
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	ՀՎՀՀ՝00477178
	Տնօրեն՝ Ս.Գյուրջյան
_____	---
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:18:17 AMST

Digitally signed by GYURJYAN SARGIS 2511900440
Date: 2019.06.24 00:35:40 AMT

Հավելված N 1
« » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-25-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33141211	Զուգահեռաչափ Parallerometr	Yuhan Չինաստան	Հատուկ ատամնատեխնիկական գործիք է: Զուգահեռաչափի բաղադրիչ մասերին են՝ տափակ վերլուծող առանցք՝ ընտրում է պրոթեզի ներմուծման ամենահարմար ուղին: Ներքնափոսերը չափելու համար տարբեր տրամագիծ ունեցող գլխիկավոր առանցքներ- գրաֆիտային (գծող) առանցք՝ միջնագիծը գծելու համար, սրիչ՝ մոմի ավելցուկները հեռացնելու համար, սեղանիկ, որի վրա ֆիքսվում է ախտորոշիչ մոդելը: ֆորմատ՝հատ:	հատ	120,000.00	120,000.00	1	ք. Երևան Կորյուն 2	1	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
2	33131110	էլաստիկ սեպարատորներ տեղադրելու աքցան Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող աքցան մետաղական, որի միջոցով բռնում են սեպարատորը և ֆիքսում ատամների միջև : ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	360,000.00	12	ք. Երևան Կորյուն 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման

											օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
3	33131110	Հակադարձ պինցետ Reverse tweezers	AG Պակիստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որի միջոցով բռնում են բրեկետը և ֆիքսում ատամի վրա : ֆորմատ՝ հատ:	հատ	16,000.00	192,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
4	33131110	Պոզիցիոներ Bracket Positioner	AG Պակիստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որը նախատեսված է բրեկետի ատամին ֆիքսացիայի ժամանակ նրա տեղադրման բարձրության որոշման համար: Երկկողմանի գործիք՝ 0,18 պազով բրեկետների համար նախատեսված և ունի չորս բարձրություն որոշելու հնարավորություն 3,5;4.0;4,5;5,0 մմ: ֆորմատ՝հատ:	հատ	16,000.00	192,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
5	33131110	Մետաղական լիգատուրանեի ծայրերի թեքման գործիք Orthodontic Plier	Morelli Բրազիլիա	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք, երկկողմանի աշխատանքային հատվածներով՝ ձողի տեսքով, մետաղական, որը նախատեսված է բրեկետների մետաղական	հատ	15,000.00	120,000.00	8	ք. Երևան Կորյուն ի 2	8	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման

				լիգատուրաների ծայրերի թեքման համար: ֆորմատ՝ հատ:							օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
6	33131110	Գործիք օրթոդոնտիկ օղակների հեռացման համար Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որը նախատեսված է ատամից օրթոդոնտիկ օղակի հեռացման համար՝: Աշխատող հատվածի մի կողմը պլաստիկից կլոր մակերես է, իսկ մյուսը սրացած մետաղական: ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	360,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
7	33131110	Գործիք բրեկետների հեռացման համար Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որը նախատեսված է ատամի վրայից բրեկետի հեռացման համար, ունի հատուկ սրված թշիկներ ,որոնց միջոցով բռնում են բրեկետի հիմքը և հեռացնում այն ատամի մակերեսից; ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	180,000.00	6	ք. Երևան Կորյուն ի 2	6	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
8	33131110	Գործիք էլաստիկ լիգատուրայի տեղադրման համար Orthodontic Plier	AG Պակիստան	Հատուկ օրթօդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որը նախատեսված է էլաստիկ օղակները բրեկետի վրա տեղադրելու համար: Երկկողմանի գործիք է: ֆորմատ՝ հատ:	հատ	13,000.00	156,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային

											օրվա ընթացքում:
9	33131110	Դիստալ կտրող գործիք Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական, որը նախատեսված է բերանի խոռոչում և բերանի խոռոչից դուրս օրթոդոնտիկ աղեղի ծայրերի կտրման համար: ֆորմատ՝ հատ:	հատ	35,000.00	420,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
10	33131110	Սեղմիչ գործիք մետաղական լիգատուրայի ամրացման համար Orthodontic Plier	Orthoclassic ԱՄՆ	Օրթոդոնտիայում կիրառվող սեղմիչ մետաղական գործիք, նուրբ ,փոքր, ներսից ատամնավոր աշխատանքային հատվածով: ֆորմատ՝ հատ:	հատ	29,000.00	348,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
11	33131110	Ուղիղ կտրող գործիք Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող մետաղական գործիք, սուր կտրող աշխատանքային հատվածով ,որը նախատեսված է մետաղական լիգատուրայի, էլաստիկ շղթաները կտրելու համար: ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	360,000.00	12	ք. Երևան Կորյուն ի 2	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:

12	33131110	Վայնգարտի աքցան Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթօդոնտիայում կիրառվող ունիվերսալ գործիք, մետաղական աքցան, որը նախատեսված է աղեղի տեղադրման համար մոլարների թշային աղեղում ,աղեղի եզրերի թեքման համար: Գործիքի եզրերը կլորացված են: ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	180,000.00	6	ք. Երևան Կորյուն 2	6	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
13	33131110	Էնգլի աքցան Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք բազմաֆունկցիոնալ ,մետաղական աքցան, որը նախատեսված է օրթոդոնտիկ աղեղի վրա ծռվածքներ ստանալու համար:Աշխատանքային հատվածը ունի կտուցի տեսք : ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	180,000.00	6	ք. Երևան Կորյուն 2	6	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
14	33131110	Ադերերի աքցան Orthodontic Plier	YayiDent Չինաստան	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք մետաղական աքցան, որը նախատեսված է 0,9 մմ տրամագծով օրթոդոնտիկ աղեղի վրա ծռվածքներ ստանալու համար: ֆորմատ՝ հատ:	հատ	30,000.00	180,000.00	6	ք. Երևան Կորյուն 2	6	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
15	33131110	օրթոդոնտիկ օղակներ 41UL,		Մետաղական օղակներ օրթոդոնտիկ քմային փականներով 26-րդ	հատ	2,500.00	15,000.00	6	ք. Երևան	6	Ապրանքների մատակարարումը

		Orthodontic bands	Protect Չինաստան	ատամի համար:ֆորմատ՝ հատ:Չափսը 41 UL					Կորյուն ի 2		իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
16	33131110	օրթոդոնտիկ օղակներ UR42 Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ քմային փականներով 16-րդ ատամի համար:ֆորմատ՝ հատ:Չափսը՝ UR 42	հատ	2,500.00	15,000.00	6	ք. Երևան Կորյուն ի 2	6	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
17	33131110	օրթօդոնտիկ օղակներ 39UL, Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ քմային փականներով 26-րդ ատամի համար:ֆորմատ՝հատ:Չափսը 39 UL	հատ	2,500.00	75,000.00	30	ք. Երևան Կորյուն ի 2	30	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
18	33131110	օրթոդոնտիկ օղակներ 39UR Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ քմային փականներով 16-րդ ատամի համար:ֆորմատ՝ հատ:Չափսը՝39 UR	հատ	2,500.00	75,000.00	30	ք. Երևան Կորյուն ի 2	30	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին,

											պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
19	33131110	օրթոդոնտիկ օղակներ 40LL Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ 36-րդ ատամի համար: ֆորմատ՝ հատ: Չափսը 40 LL	հատ	2,500.00	15,000.00	6	ք. Երևան Կորյուն ի 2	6	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
20	33131110	օրթոդոնտիկ օղակներ LR40 Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ 46-րդ ատամի համար: ֆորմատ՝ հատ:Չափսը՝ LR 40	հատ	2,500.00	15,000.00	6	ք. Երևան Կորյուն ի 2	6	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
21	33131110	օրթոդոնտիկ օղակներ 36LL Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ 36-րդ ատամի համար: ֆորմատ՝ հատ:Չափսը 36 LL	հատ	2,500.00	75,000.00	30	ք. Երևան Կորյուն ի 2	30	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից

											հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
22	33131110	օրթոդոնտիկ օղակներ LR36 Orthodontic bands	Protect Չինաստան	Մետաղական օղակներ օրթոդոնտիկ 46-րդ ատամի համար: ֆորմատ՝ հատ:Չափսը՝ LR 36	հատ	2,500.00	75,000.00	30	ք. Երևան Կորյուն ի 2	30	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
23	33141211	Օրթոդոնտիկ լար Orthodontics	Morelli Բրազիլիա	Հատուկ օրթոդոնտիկ սարքեր պատրաստելու համար(քմային աղեղ) : Տրամագիծը՝0.9մմ: ֆորմատ՝ հատ	հատ	12,000.00	36,000.00	3	ք. Երևան Կորյուն ի 2	3	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
24	33141212	Բրեկետների ֆիքսացիայի կոմպոզիտ ASPIRE	OrthoClassic ԱՄՆ	Կոմպոզիտային պլոմբանյութ, բրեկետների ֆիքսացիայի համար : Քիմիական կարծրցման կոմպոզիտ:Հավաքածուն պարունակում է՝ ադհեզիվ ,թթվուտամշակման գել, կոմպոզիտ 4 գ շպրիցի մեջ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի	հատ	25,000.00	50,000.00	2	ք. Երևան Կորյուն ի 2	2	Ապրանքների մատակարարու մը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային

				առակայություն: ֆորմատ՝ հատ							օրվա ընթացքում:
25	33131420	Մետաղական լիգատուրաներ Iron ligatur	American Orthodontics ԱՄՆ	Հատուկ օրթոդոնտիկ մետաղական լիգատուրաներ ,որոնք կիրառում են օրթոդոնտիկ աղեղը բրեկետի պազում ֆիքսելու համար: ֆորմատ՝ հատ	հատ	75.00	75,000.00	1000	ք. Երևան Կորյունի 2	1000	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:
26	33131110	Գործիք օրթոդոնտիկ օղակների նստեցման համար Orthodontic Plier	Morelli Բրազիլիա	Հատուկ օրթոդոնտիայում կիրառվող գործիք պլաստմասե, որը նախատեսված է ատամի վրա օրթոդոնտիկ օղակի նստեցման համար: ֆորմատ՝ հատ:	հատ	10,000.00	90,000.00	9	ք. Երևան Կորյունի 2	9	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 50 օրացույցային օրվա ընթացքում:

Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:

Այն չափաբաժինները, որոնց համար կիրառելի է պիտանելիության ժամկետ, պետք է ունենան ամբողջ պիատնելիության ժամկետի 50%

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
_____
(ստորագրությունը)

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:18:40 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Դավ Պրոդուկտ»ՍՊԸ
Հասցե՝ք.Երևան Էրեբունի փող. 23/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ Կամար մ/ճ
Հ/Հ 157003168230100
Էլ.հասցե՝ productdav@gmail.com
ՀՎՀՀ՝00477178
Տնօրեն՝ Ս.Գյուրջյան

(ստորագրությունը)

Digitally signed by GYURJYAN SARGIS 2511900440
Date: 2019.06.24 00:36:46 AMT

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	33141211	Զուգահեռաչափ	0	0	0	0	0	0	0	0	120,000.00	120,000.00	120,000.00	120,000.00	120,000.00
2	33131110	Էլաստիկ սեպարատորներ տեղադրելու աքցան	0	0	0	0	0	0	0	0	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00
3	33131110	Հակադարձ պինցետ	0	0	0	0	0	0	0	0	192,000.00	192,000.00	192,000.00	192,000.00	192,000.00
4	33131110	Պոզիցիոներ	0	0	0	0	0	0	0	0	192,000.00	192,000.00	192,000.00	192,000.00	192,000.00
5	33131110	Մետաղական լիգատուրաների ծայրերի թեքման գործիք	0	0	0	0	0	0	0	0	120,000.00	120,000.00	120,000.00	120,000.00	120,000.00

6	33131110	Գործիք օրթոդոնտիկ օղակների հեռացման համար	0	0	0	0	0	0	0	0	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00
7	33131110	Գործիք բրեկետների հեռացման համար	0	0	0	0	0	0	0	0	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00
8	33131110	Գործիք էլաստիկ լիգատուրայի տեղադրման համար	0	0	0	0	0	0	0	0	156,000.00	156,000.00	156,000.00	156,000.00	156,000.00
9	33131110	Դիստալ կտրող գործիք	0	0	0	0	0	0	0	0	420,000.00	420,000.00	420,000.00	420,000.00	420,000.00
10	33131110	Սեղմիչ գործիք մետաղական լիգատուրայի ամրացման համար	0	0	0	0	0	0	0	0	348,000.00	348,000.00	348,000.00	348,000.00	348,000.00
11	33131110	Ուղիղ կտրող գործիք	0	0	0	0	0	0	0	0	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00	360,000.00
12	33131110	Վայնգարտի աքցան	0	0	0	0	0	0	0	0	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00
13	33131110	Էնգլի աքցան	0	0	0	0	0	0	0	0	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00

14	33131110	Ադերերի աքցան	0	0	0	0	0	0	0	0	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00	180,000.00
15	33131110	օրթոդոնտիկ օղակներ 41UL,	0	0	0	0	0	0	0	0	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00
16	33131110	օրթոդոնտիկ օղակներ UR42	0	0	0	0	0	0	0	0	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00
17	33131110	օրթօդոնտիկ օղակներ 39UL,	0	0	0	0	0	0	0	0	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00
18	33131110	օրթոդոնտիկ օղակներ 39UR	0	0	0	0	0	0	0	0	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00
19	33131110	օրթոդոնտիկ օղակներ 40LL	0	0	0	0	0	0	0	0	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00
20	33131110	օրթոդոնտիկ օղակներ LR40	0	0	0	0	0	0	0	0	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00	15,000.00
21	33131110	օրթօդոնտիկ օղակներ 36LL	0	0	0	0	0	0	0	0	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00

22	33131110	օրթօդոնտիկ օղակներ LR36	0	0	0	0	0	0	0	0	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00
23	33141211	Օրթոդոնտիկ լար	0	0	0	0	0	0	0	0	36,000.00	36,000.00	36,000.00	36,000.00	36,000.00
24	33141212	Բրեկետների ֆիքսացիայի կոմպոզիտ	0	0	0	0	0	0	0	0	50,000.00	50,000.00	50,000.00	50,000.00	50,000.00
25	33131420	Մետաղական լիգատուրաներ	0	0	0	0	0	0	0	0	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00	75,000.00
26	33131110	Գործիք օրթոդոնտիկ օղակների նստեցման համար	0	0	0	0	0	0	0	0	90,000.00	90,000.00	90,000.00	90,000.00	90,000.00

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Միսիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.06.24 18:18:59 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Դավ Պրոդուկտ»ՍՊԸ
Հասցե՝ք.Երևան Էրեբունի փող. 23/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ Կամար մ/ճ
Հ/Հ 157003168230100
Էլ.հասցե՝ productdav@gmail.com
ՀՎՀՀ՝00477178
Տնօրեն՝ Ս.Գյուրջյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by GYURJYAN SARGIS 2511900440
Date: 2019.06.24 00:37:35 AMT

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն